քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԳՈՒԴ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի՝ Արտաշատի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից՝ «ԳՈՒԴ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 26.12.2025թ. կայացված թիվ 5050-Ա որոշումն անվավեր ճանաչել (վերացնել) պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել Արտաշատ համայնքի ղեկավարի 26.12.2025թ. թիվ 5050-Ա որոշում:

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքից հօգուտ «ԳՈՒԴ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IED1-A75B-4672-A112 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am